զում տրօք զսիրտ իշխանացն . և մատուցեալ առ մեծ իշխանն , որ ասէ Վէղիր Քիահեասի , խօսեցաւ ինչ առ ի խափանելոյ զիշխանութիւն կաթողիկոսութեանն Եղիազարու , և հաստատելոյ զՊատրիարքութիւնն Աստուածատրոյ եւ զիսխանորդութիւն իւր : Իրրեւ իմացաւ զայս Ալրօ Զէլէպի , եմուտ և ինքն առ իշխանն , և չանացաւ ունայնացուցանել զբանն Մարտիրոսի . բայց Մարտիրոս տուեալ իշխանին 18,000 դահեկան և ծառայից նորա եւս 2000 , համեցոյց զնա միայն վասն բանի Պատրիարքութեան Աստուածատրոյ եւ իսխանորդութեան իւրոյ . իսկ ընդդէմ կաթուղիկոսութեան եղիազարու ոչ ինչ կարաց առնել . եւ իշխանն մտեալ առ եպարքոսն՝ խնդրեաց ի նմանէ , զի եթէ օք ընդդէմ ելցէ Պատրիարքութեան Աստուածատրոյ և իսխանորդութեան Մարտիրոսի՝ մի՛ լուիցէ նմա ի չնորհս իւր . և եպարքոսն խոստացաւ կատարել զխընդիր նորա :

Եհաս ապա և եղիազար յԱդրիանուպօլիս . եկին առ նա եւ բազումք ի դործակցաց նորա ի զանազան կողմանց ի Կոստանդնուպօլսոյ , ի Թեքիրտաղ և յայլոց քաղաքաց , աշխարհականք , երիցունք և վարդապետք , և ամենեքին միաբան ժողովեալ ի վրանն Ալրօ Զէլէպեայ՝ խորհէին և յորդոր լինէին միմեանց վասն յաջողութեան իրացն եղիազարու : Իսկ Ալրօ՝ քանզի էր այր խորագէտ և զգուշաւոր՝ խորհուրդ ետ նոցա և ասէ . մի ինչ չտապաւ գործեսցուք , և մի՛ ընդ վայր ծախեսցուք զդրամս . թող զի Մարտիրոսեանք և եւս դատարկեսցեն զքսակս իւրեանց , և անկցին ընդ պարտիւք . և ապա դիւրաւ լինի մեզ հաճել զեպարքոսն վասն բանի կաթուղիկոսութեան , զի նա ի մեր կողմն է . իսկ Պատրիարքութենէ երուսաղէմի յետոյ հոդացուք յիւրում ժամանակին : Եւ ինքն առանձին մտեալ առ եպարքոսն՝ ազդ արար նմա՝ թէ եկեալ է յոտս ձեր եղիազարն այն , որում ետուք հրաման վասն կաթուղիկոսութեան , և ոսոխք նորա ասէ հասեալ յառաջագոյն՝ չանահնար լինին դատաճանել զնա . և եպարքոսն ետ պատասխանի , գիտեմ և ես լուռ լեր :

Այլ Մարտիրոս վարդապետ՝ որ ոչ կարաց խափանումն ինչ առնել իշխանութեան եղիազարու , յետ աւուրց ինչ էառ